



Ներածություն

Վերջին երեք հարյուր տարիների ընթացքում տեխնոլոգիան, անկասկած, դրական ազդեցություն է ունեցել մարդկության ավելի մեծ մասի կյանքի ու բարեկեցության վրա, քան նախկինում՝ մարդկության ողջ պատմության մեջ: Հասարակ մարդիկ այժմ կարող են ապրել ավելի երկար, ավելի առողջ և բավարարված, քան նախկինում ապրող ամենահզոր մարդիկ:

Հատկանշական է, որ Արդյունաբերական հեղափոխությանը և Կանաչ հեղափոխությանը (որը շատերին փրկեց սովից) նպաստած նյութը, որը համեմատելի է ածուխի և նավթի հետ Պլաստիկն է: Ներկայումս կյանքը թե՛ ամենահարուստ և թե՛ ամենաաղքատ համայնքերում անհնար է պատկերացնել առանց այս նյութի: Այն ներթափանցում է մարդկային գործունեության յուրաքանչյուր ոլորտ՝ սկսած տների կառուցման համար անհրաժեշտ շինարարագաներից, ջրի տեղափոխման և պահպանման դուլերից, մեքենաներից վերջացրած սննդամթերքի պահպանման փաթեթավորմամբ: Այսօր մարդու կյանքը առհասարակ դժվար է պատկերացնել առանց պլաստիկի օգտագործման:

Ցավոք, հենց այն հատկությունները, որոնք նյութը դարձնում են արժեքավոր՝ բազմակողմանիություն, երկարաժամկետ օգտագործման հնարավորություն, բազմակի օգտագործում, շուկայում հայտնվելուց մեկ դարի ընթացքում այն վերածել են կյանքին սպառնացող վտանգի:

Այժմ պլաստիկը ներթափանցում է երկիր մոլորակի բոլոր միջավայրերն ու անկյունները: Տանը պլաստիկի մանր մասնիկները (միկրոպլաստիկ) ներթափանցում են օդ և հայտնվում սննդի և պարագաների վրա՝ դառնալով վտանգավոր առողջության համար:

Քաղաքների ու գյուղերի փողոցներում և աղբավայրերում հանդիպող պոլիէթիլենային տոպրակների մնացորդները կենդանիները ուտում են՝ վնասելով ներքին օրգանները: Օվկիանոսների մակերևութից մինչև ամենախոր հատվածներում հայտնված պլաստիկի մնացորդները վկայում են մարդկային «քաղաքակրթության» մասին: Խաղաղ օվկիանոսում գտնվող աղբի կղզին, որը կարելի է պատկերացնել որպես (մայրցամաքի չափ) ամբողջությամբ պլաստիկով պատված 1,6 միլիոն քառակուսի կմ (տարածքը երեք անգամ մեծ է Ֆրանսիայից) ունեցող կղզի, լողում է աննպատակ չքայքայվող պլաստիկի անմարսելի մնացորդով կերակրելով ծովային թռչուններին, ձկներին և կետերին: Հասկանալի է, որ ջրային կյանքը չի կարող գոյատևել նման պայմաններում:

Լուծումը պլաստիկի օգտագործման ամբողջական և հանկարծակի արգելքը չէ: Այն, ինչ այժմ անհրաժեշտ է, ոչ պիտանի պլաստիկի կիրառման անհապաղ դադարեցումն է կամ Էկոլոգիապես ավելի լավ նյութերով փոխարինումը: Եվ, իհարկե, հրատապ աջակցություն պետք է ցուցաբերվի հետազոտություններին և նորարարություններին՝ մշակելու նույն օգուտներին հանգեցնող, բայց վնաս չհասցնող այլընտրանքներ:

